Ալէքսանդրապոլցի. 18) Տէր-Աւագեան Անուշաւան, Էրզրումցի. (Գարալագեազի գ.), 19) Տէր-Իսրայէլեան Սրիատակէս, Հաճընեցի (Տարօնի թեմ). 20) Տէր-Յակոբեան Վաղինակ, Թաւրիզեցի. և 21) Փոչարեան Ստեփան, Վաղարշապատցի։ 3 հոգի էլ վերաքննելի են առաջիկայ ուսման տարուայ սկզբին։

Աւարտող լսարանցիները յունիսի 5-ին, կիրակի օրը, ս. պատարագից յետոյ Ամենապատիւ Տ. Տեղակալի, վանքի միաբանութեան, Ճեմարանի ուսուցիչների և հասարակութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարեցին Ճեմարանի Հիմնադրի՝ երջանկայիշատակ Գէորգ Գ. կաթողիկոսի գերեզմանի վրայ. ուսանողներից մէկը, Գառնիկ Շահինեան, իւր և իւր ընկերների կողմից երախտագիտական զգացմունքով մի ճառ արտասանեց՝ նուիրած հանգուցեալ Հիմնադրի յիշատակին և նրա կառուցած կրթական տաճարին, խոստանալով կեանքի մէջ ծառայել հայ ժողովրդի ժառաւր և քարոյական վերածնութեան։

Երուանդզադէի յոբելեանը։—Անցեալ մայիսի 22-ին Թիֆլիսում մեծ հանդիսաւորութեամբ տօնուեց հայ վիպագիր և թատերագիր պ. Ալէքսանդր Երուանդզադէի գրական գործունէութեան երեսնամեակը։ Բոլոր լրագրները լի էին յոբելեանի մասին տեղեկութիւններով և յոբելենական տօնի նկարագրութիւններով։ «Արարատ»ը դեռ անցեալ տարի պ. Երուանդզադէի վէպերի մասին տպել էր մի վերլուծութիւն։

Ի սրտէ ցանկանում ենք պ. Երուանդզադէին առողջութիւն և հոգւոյ անդորրութիւն՝ իւր բեղմնաւոր գրչով հարստացնելու մեր ազգային գրականութիւնը։

Յայտնի բանաստեղծ, մանկավարժ և հրապարակախօս Ծերունի Ղազարոս Ագայեանցը յունիսի 20-ին յանկարծամահ եղաւ։